

4

ՄԱՅԻՍԻ
2022



ԳՆԱԾԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ
ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ԳՆԱՃԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Որքանո՞վ է իրականում նվազել բնակչության կենսամակարդակը
2020 թվականի վերջից արագացող գնաճի հետևանքով



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	1
1. ԳՆԱՃԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ	2
2. ԳՆԱՃԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ	7
3. ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԱՃԻ ՆՊԱՍՏՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՃԻՆ.....	12
4. ԳՆԱՃԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ՝ ԸՍՏ ՏԱՐԲԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ.....	14
5. ՌՈՒՍ-ՌԻԿՐԱԴԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՆԱՃԻ ՀԵՏԱԳԱ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ.....	19
ԱՄՓՈՓՈՒՄ	22
Օգտագործված գրականության ցանկ և աղբյուրներ	24

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 և 2021 թվականներին ՀՀ տնտեսությունը բախվել է մի շարք բացասական երևույթների ազդեցությունների՝ սկսած COVID-19 համավարակից և Արցախյան պատերազմից մինչև քաղաքական անկայունություն, արտահերթ ընտրություններ և անորոշությունների էական աճ: Այս պայմաններում, 2020թ. դեկտեմբեր ամսից սկսել է արագանալ գնաճի տեմպը՝ հանգեցնելով սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների սրմանը: 2021թ. արձանագրվել է վերջին 10 տարիների ամենաբարձր գնաճը, ինչը պայմանավորված է եղել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով:

Այդպիսի բարձր գնաճն իր ազդեցություններն է ունեցել մակրոտնտեսական և հարկաբյուջետային ցուցանիշների վրա: ՀՀ կենտրոնական բանկը, արձագանքելով ստեղծված իրավիճակում գնաճային սպասումներին, 2020թ. դեկտեմբերից շարունակաբար բարձրացրել է դրամավարկային քաղաքականության (ԴՎԲ) տոկոսադրույքը՝ 4.25%-ից 2022թ. մարտին հասցնելով 9.25%-ի, ինչն իր հերթին բացասաբար է ազդել տնտեսական ակտիվության վրա: Գնաճի պայմաններում նվազել են նաև բնակչության իրական եկամուտները՝ հանգեցնելով կենսամակարդակի անկմանը: Սույն վերլուծությունում իրականացվել է նշված ուղղություններով գնաճի ազդեցությունների մանրամասն ուսումնասիրություն՝ առավել ակնհայտ դարձնելով գնաճի մակրոտնտեսական հետևանքները:

Միաժամանակ, առանձին ապրանքատեսակների գների աճի տեմպերն էականորեն տարբերվել են միմյանցից: Այդ իսկ պատճառով սույն աշխատանքում իրականացվել է ինչպես գնաճի վերլուծություն՝ ըստ նպաստող ապրանքատեսակների, այնպես էլ ուսումնասիրվել է բնակչության տարբեր դեցիլային խմբերի համար սպառողական գների փոփոխության չափը: Համադրելով այդ արդյունքները բնակչության եկամուտների փոփոխության հետ՝ հնարավոր է եղել եզրակացություններ անել բնակչության կենսամակարդակի փոփոխության վերաբերյալ:

Պետք է նշել նաև, որ 2021 թվականին գնաճի տեմպի արագացումը և դրա հետևանքները 2022թ. կարող են ավելի ուժգնանալ: Պատճառն այն է, որ 2022թ. փետրվարից սկսված ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում արդեն իսկ նկատվում է պարենի և էներգակիրների համաշխարհային գների աճ, ինչը միանշանակ կտարածվի նաև ՀՀ տնտեսություն՝ հանգեցնելով գների աճի հետագա արագացմանը: Հետևաբար, սույն աշխատանքում նաև վերլուծվել են ռուս-ուկրաինական հակամարտության հնարավոր ազդեցությունները (առկա անորոշությունների պարագայում) գնաճի վրա:

1. ԳՆԱԾԻՆ ՆՊԱՍՏՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀՀ-ՈՒՄ


2020թ. սկզբից արագորեն տարածվող և գրեթե բոլոր երկրներ ներթափանցած համավարակը ունեցել է բազմատեսակ բացասական հետևանքներ, որոնցից մեկն էլ գների աճի կտրուկ արագացումն է ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրներում: Գնաճի արագացումը հատկապես ուժգնացել է 2021թ. և մինչ այժմ էական դանդաղման միտումներ չի դրսևորում՝ չնայած մակրոտնտեսական քաղաքականությունների արձագանքին: Ներկա գնաճի դեմ պայքարը բարդ է, քանի որ գնաճի վրա ազդում են բազմաթիվ գործոններ ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի կողմից:

Գնաճի վրա ազդող գործոնների վերաբերյալ խոսվում է նաև ԱՄՀ-ի կողմից 2022թ. հունվարին հրապարակված զեկույցում, որտեղ որպես գնաճի արագացման հիմնական պատճառներ են նշվում էներգակիրների և սննդի գների աճը, ինչպես նաև այլ գործոններ (դրանք ներառում են մատակարարման շղթաների խափանումները, խցանված նավահանգիստները, ցամաքային սահմանափակումները, ինչպես նաև որոշ ապրանքների նկատմամբ պահանջարկի աճը), որոնք ունեցել են տարբեր կարևորություն՝ կախված երկրներից և տարածաշրջաններից: Զարգացած երկրներում առավել նշանակալի են եղել էներգակիրների գները, որոնք վերջին մեկ տարում գրեթե կրկնապատկվել են՝ առաջացնելով ավելի բարձր գնաճ, հատկապես Եվրոպայում: Պարենային ապրանքների գներն աճել են շուրջ 23.5%-ով՝ նույնպես զգալիորեն նպաստելով գնաճին: Վերջինիս, ինչպես նաև էներգակիրների գների կտրուկ աճերը բացատրվում է 2020թ. համավարակի սահմանափակումների և դրանց արդյունքում ստեղծված խնդիրների դեռևս վերացած չլինելու պայմաններում 2021թ. համաշխարհային պահանջարկի կտրուկ աճով:

Զարգացող երկրներում գնաճի դինամիկան զգալիորեն պայմանավորված է եղել ներմուծվող ապրանքների ավելի բարձր գների առկայությամբ¹, մինչդեռ մատակարարման շղթաների խափանումները և նմանօրինակ այլ գործոններ նույնպես կարևոր դեր են ունեցել: Միաժամանակ, զարգացող երկրներում փոխարժեքի տատանումները հակազդել են գնաճին՝ այն պատճառով, որ 2020թ. հիմնականում տեղի էր ունեցել արժեզրկում, որի համեմատ 2021թ. զարգացող երկրների փոխարժեքները եղել են արժևորված (Գծապատկեր 1):


¹ IMF World Economic Outlook, January 2022 Update. Rising Caseloads, A Disrupted Recovery, and Higher Inflation.

Գծապատկեր 1. Գների աճը 2021թ. վերջում՝ 2020թ. դեկտեմբերի համեմատ և գնաճը պայմանավորող գործոնները



Աղբյուրը՝ ԱՄՀ

Գծապատկեր 2. Գների աճը համաշխարհային շուկաներում




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, ներկայացված է գների ինդեքսը, 2020թ. դեկտեմբեր = 100

Գնաճի արագացման էական գործոն է եղել նաև պահանջարկի աճը, որն էլ իր հերթին բացատրվում է համավարակի բացասական հետևանքների մեղմմանն ուղղված հարկաբյուջետային փաթեթների զգալի չափերով: Վերջիններս աննախադեպ ծավալների հասան 2020-2021 թվականներին՝ հատկապես զարգացած երկրներում: Սակայն, ավելի քան 50 երկրների² տվյալների ուսումնասիրության արդյունքում հարկաբյուջետային փաթեթների չափի և գնաճի տեմպի միջև նշանակալի փոխկապվածություն չի նկատվում (Գծապատկեր 3): Դա թույլ է տալիս եզրակացնել, որ հարկաբյուջետային փաթեթների հետևանքով աճող պահանջարկի ազդեցությունը համաշխարհային գնաճի վրա նշանակալի չի եղել:

² Երկրների ցանկում ներառված են ինչպես զարգացող (Հայաստանը, տարածաշրջանի և ԵԱՏՄ երկրներ, ինչպես նաև Արևելյան Եվրոպայի զարգացող երկրներ), այնպես էլ զարգացած երկրներ (ԱՄՆ, Արևմտյան Եվրոպայի երկրներ և այլ զարգացած երկրներ):

Գծապատկեր 3. Առանձին երկրներում հարկաբյուջետային խթանների ծավալը և գնաճի տեմպը



Հարկաբյուջետային փաթեթների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ԱՄՀ տվյալների բազան է, իսկ գնաճի վերաբերյալ՝ համապատասխան երկրների վիճակագրական ծառայությունները: Ինչպես հարկաբյուջետային փաթեթների, այնպես էլ գնաճի տվյալները վերաբերում են 2020թ. սկզբից մինչև 2021թ. վերջն ընկած ժամանակահատվածին:

ՀՀ-ում գնաճի արագացումը, ըստ ՀՀ կենտրոնական բանկի, պայմանավորված է եղել առաջարկի գործոններով, այդ թվում՝ միջազգային ապրանքային շուկաներում գների աճի և դրանց՝ ՀՀ տնտեսություն փոխանցման, ինչպես նաև 2021թ. առաջին կեսին փոխարժեքի արժեզրկման ազդեցություններով³: Մինչև 2021թ. տարեվերջ գնաճի արագացման պահանջարկի գործոնների դերը ավելացել է՝ կապված արտաքին պահանջարկի արագացման և արտերկրից դեպի Հայաստան դրամական փոխանցումների պահպանվող բարձր ցուցանիշների հետ⁴: Այդ պայմաններում Կենտրոնական բանկը շարունակել է տոկոսադրույքի բարձրացման քաղաքականությունը՝ տարեվերջին հասցնելով այն 8.0%-ի:


2019թ. վերջի համեմատ 2021թ. վերջում ՀՀ-ում արձանագրված գնաճն ավելի ցածր է եղել համադրելի, ինչպես նաև տարածաշրջանի երկրներում արձանագրված ցուցանիշներից՝ կազմելով շուրջ 11.8%: Նույն ժամանակահատվածում՝ 2020-2021թթ., ՀՀ-ում արձանագրվել է նույն երկրների շարքում գրեթե ամենադանդաղ տնտեսական աճը, որի արդյունքում ՀՀ իրական արտադրությունը չի վերականգնվել և նույնիսկ չի հավասարվել 2019թ. մակարդակին: Նման իրավիճակ դիտարկվող երկրների շարքում տեղի է ունեցել

³ Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2-րդ եռամսյակ 2021թ., Դրամավարկային քաղաքականության 2021թ. 1-ին եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն), ՀՀ կենտրոնական բանկ, 28.06.2021:


⁴ Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 4-րդ եռամսյակ 2021թ., Դրամավարկային քաղաքականության 2021թ. 3-րդ եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն), ՀՀ կենտրոնական բանկ, 27.12.2021:

միայն Ղրղզստանում, մինչդեռ մնացած բոլոր երկրներում 2021թ. իրական արդյունքը գերազանցել է 2019թ. ստեղծվածին (Գծապատկեր 5):

Գծապատկեր 4. Գնաճի տեմպի համեմատությունը, ինդեքս, 2019թ.=100



Գծապատկեր 5. Տնտեսական աճերի համեմատությունը, ինդեքս, 2019թ.=100



Աղբյուրը՝ ԱՄՀ, 2021թ. ցուցանիշների համար՝ համապատասխան երկրների ազգային վիճակագրական ծառայություններ

Ըստ ԱՄՀ կանխատեսումների, որոնք արվել են մինչև ռուս-ուկրաինական հակամարտության սկիզբը, սպասվում էր, որ գնաճի բարձր տեմպերը կպահպանվեն նաև 2022թ.⁵ զարգացող երկրներում լինելով միջին հաշվով 5.9%, իսկ զարգացած երկրներում՝ 3.9%, այնուհետև 2023-ից գնաճի տեմպը կսկսի դանդաղել⁵: Սակայն, 2022թ. ապրիլին հրապարակված ԱՄՀ զեկույցում գնաճի կանխատեսումները զգալիորեն վերանայվել են դեպի վեր, և այժմ զարգացող երկրներում 2022թ. կանխատեսվում է 8.7% գնաճ, իսկ զարգացած երկրներում՝ 5.7%⁶: Այս վերանայումը հիմնականում պայմանավորված է ռուս-ուկրաինական հակամարտության հետևանքով գնաճն արագացնող գործոնների ուժգնացմամբ: Մասնավորապես՝ պատերազմի հետևանքով ավելի կտրուկ է արագացել սննդի և էներգակիրների գների աճը (քանի որ այս ապրանքատեսակների համաշխարհային շուկաներում էական դեր ունեն ՌԴ-ն և Ուկրաինան), իսկ մատակարարումների շղթաների խափանումների համար նոր պատճառներ են ստեղծվել: Այս պայմաններում փոխվել է նաև ԱՄՀ սպասումները հետագա տարիների վերաբերյալ. եթե հունվարի կանխատեսումներում ԱՄՀ-ն ակնկալում էր գնաճի դանդաղում 2023 թվականից սկսած, ապա ներկայումս էապես մեծացել է կանխատեսման անորոշությունները և առկա են գների աճի հետագա արագացման ռիսկեր:

⁵ IMF World Economic Outlook, January 2022 Update. Rising Caseloads, A Disrupted Recovery, and Higher Inflation.

⁶ IMF World Economic Outlook: War Sets Back the Global Recovery, April, 2022.

Համաշխարհային շուկաներում գնաճի նման տեմպերը ՀՀ-ի նման զարգացող և բաց տնտեսությամբ երկրների համար պարունակում են ոչ միայն ներքին գնաճի (ներմուծվող ապրանքների գնաճի) առաջացման ռիսկեր, այլ նաև վտանգավոր են ընդհանուր ֆինանսական կայունության տեսանկյունից: Բանն այն է, որ զարգացած երկրներում գնաճին արձագանքելիս դրամավարկային քաղաքականություն իրականացնող մարմինները (խոսքը հատկապես վերաբերում է ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգին և ԵՄ կենտրոնական բանկին) մի կողմից՝ բարձրացնում են տոկոսադրույքը, մյուս կողմից՝ կրճատում են տնտեսությանը տրամադրվող իրացվելիությունը՝ կրճատելով պարտատոմսերի գնման ծավալները: Այս պարագայում մեծանում է վտանգը, որ խոշոր ներդրողները իրենց պորտֆելների կառուցվածքում նախապատվությունը կտան ավելի քիչ ռիսկային ակտիվներին (օրինակ՝ ԱՄՆ և ԵՄ պարտատոմսեր), որոնց տոկոսադրույքը բարձրացնում է՝ վաճառելով ռիսկային ակտիվները: Այդ պայմաններում, կապիտալի արտահոսքից խուսափելու համար, զարգացող երկրների կենտրոնական բանկերը նույնպես ստիպված կլինեն բարձրացնել տոկոսադրույքները, ինչը կհանգեցնի երկրի պետական պարտատոմսերի, ինչպես նաև մասնավոր հատվածի պարտքի տոկոսադրույքների ավելի մեծ չափով աճին, քան ԱՄՆ-ի տոկոսադրույքի աճն է՝ մեծացնելով զարգացող երկրների սուվերեն ռիսկի հավելավճարը: Դա նշանակում է, որ, օրինակ՝ ՀՀ տնտեսությունում կաճեն և՛ մասնավոր, և՛ պետական հատվածների արտաքին պարտքի վերաֆինանսավորման ծախսերը՝ մեծացնելով պարտքի սպասարկման բեռը: ՀՀ-ի նման տնտեսությունում, որտեղ համախառն արտաքին պարտքը (մասնավոր և պետական) 2021թ. վերջի դրությամբ հասել է ՀՆԱ-ի 95.1%-ին, տոկոսադրույքների աճը լուրջ վտանգ կարող է լինել: Սակայն, նույնիսկ տոկոսադրույքների աճը կարող է բավարար չլինել կապիտալի արտահոսքը կանխելու համար:

Միաժամանակ, տոկոսադրույքների ագրեսիվ բարձրացումը կարող է ծանր հետևանքներ ունենալ տնտեսության համար՝ ամբողջությամբ չչեզոքացնելով գնաճային սպասումները: Պատճառն այն է, որ գնաճի զգալի չափը պայմանավորված է առաջարկի գործոններով: Պահանջակի զսպումը չի նպաստի վերջիններիս չեզոքացմանը, փոխարենը կհանգեցնի տնտեսական ակտիվության դանդաղմանը: Այդ պայմաններում անհրաժեշտ է իրականացնել թիրախավորված հարկաբյուջետային և կառուցվածքային քաղաքականությունների միջոցառումներ՝ առաջարկի կողմում խնդիրները վերացնելու և մատակարարման շղթաների խափանումները վերականգնելու նպատակով⁷:

⁷ Joseph E. Stiglitz, A Balanced Response to Inflation, Project Syndicate, February 2022.

2. ԳՆԱԾԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Գնաճը հիմնականում դիտվում է որպես բացասական երևույթ, և համարվում է, որ տնտեսական կայուն զարգացում հնարավոր է ապահովել միայն ցածր և կայուն գնաճի պայմաններում: Դրանով է հիմնականում պայմանավորված կենտրոնական բանկերի կողմից գնաճի թիրախավորման քաղաքականության իրականացումը, որն առաջին անգամ սկսել է կիրառվել Նոր Զելանդիայում 1990 թվականին և տարածվել է բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներում: ՀՀ ԿԲ-ն սկսել է իրականացնել գնաճի նպատակադրման քաղաքականություն 2006 թվականից:

Սովորաբար գնաճը մակրոտնտեսական ցուցանիշների վրա ազդում է տարբեր ուղղություններով, որոնք հաճախ կարող են հակազդել միմյանց: Այսինքն՝ մի կողմից՝ գնաճը կարող է ունենալ դրական, մյուս կողմից՝ բացասական ազդեցություններ: Մասնագիտական գրականությունում նշվում է, որ գնաճի չափազանց ցածր մակարդակը (զրոյին մոտ կամ զրոյից ցածր) նույնպես բացասական ազդեցություն կարող է ունենալ տնտեսության վրա՝ հիմնականում պայմանավորված աշխատավարձերի դեպի ներքև ճշգրտման դժվարություններով և անվանական տոկոսադրույքի զրոյական սահմանով (կենտրոնական բանկերի գործողությունները սահմանափակվում են տոկոսադրույքի՝ զրոյին մոտ կամ դրանից ներքև լինելու պայմաններում)⁸: Այդ իսկ պատճառով կենտրոնական բանկերը հիմնականում թիրախավորում են զրոյից բարձր գնաճի ցուցանիշ՝ հիմնականում 2-ից 5%-ի սահմաններում: Դրանից բարձր գնաճը, սակայն, սկսում է բացասաբար ազդել տնտեսության վրա: Հետազոտությունները ցույց են տալիս, որ մինչև 10%-ի սահմաններում գնաճի տեմպը կարող է հանգեցնել իրական ՀՆԱ-ի տարեկան ծավալի շուրջ 6.8% նվազեցմանը⁹: Բացասական կապ է առկա նաև գնաճի և տեխնոլոգիական զարգացման միջև. գնաճի տեմպի արագացումը հանգեցնում է հետազոտությունների և զարգացման ուղղությամբ ներդրումների կրճատմանը, ինչն էլ իր հերթին բացասաբար է ազդում երկրի տնտեսական ներուժի զարգացման վրա¹⁰:

Վերոհիշյալից բացի, ինչպես նշվել է նաև նախորդ բաժնում, գնաճի պայմաններում դրամավարկային պայմանների խստացումը (այդ թվում՝ տոկոսադրույքի բարձրացումը), որն իրականացվում է գնաճի թիրախավորման

⁸ Akerlof, George A., William T. Dickens, and George L. Perry "The Macroeconomics of Low Inflation." *Brookings Papers on Economic Activity* 1 (1996): 1-76.

Fortin, Pierre. "The Great Canadian Slump." *Canadian Journal of Economics* 29 (November 1996): 761-787.


⁹ Ashraf Q., Gershman B., Howitt P. "How Inflation Affects Macroeconomic Performance: An Agent-Based Computational Investigation", June 2013.

¹⁰ Rocha L.A., Cardenas L.Q., Reis F.A., Silva N.G. "Inflation and innovation value: How inflation affects innovation and the value strategy across firms", *Estudios Económicos*, vol. XXXVIII, no. 76, pp. 147-195, 2021.

քաղաքականություն որդեգրած կենտրոնական բանկերի կողմից (ներառյալ՝ նաև Հայաստանում), ևս բացասական ազդեցություն է ունենում տնտեսության վրա¹¹: Ի դեպ, 2021թ. ընթացքում տոկոսադրույքների բարձրացում է տեղի ունեցել ոչ միայն զարգացող, այլ նաև զարգացած երկրներում:


Հայաստանում վերջին տարիներին համեմատաբար ցածր գնաճային միջավայրի արձանագրումից հետո գների աճը սկսել է արագանալ 2020թ. դեկտեմբերին, երբ 12-ամսյա գնաճը հասավ 3.7%-ի՝ նույն տարվա նոյեմբերի 1.6%-ից հետո: ՀՀ կենտրոնական բանկը, արձագանքելով սպասվող աճին (արձագանքի պահին գնաճի ցուցանիշը դեռևս չէր հրապարակվել), կտրուկ բարձրացրեց տոկոսադրույքը շուրջ 1.0 տոկոսային կետով: Այնուհետև, 2021թ. ընթացքում գնաճի տեմպն աստիճանաբար արագացավ, իսկ ՀՀ ԿԲ-ն շարունակեց բարձրացնել տոկոսադրույքը՝ տարեվերջին հասցնելով 7.75%-ի, որը շուրջ 1.8 անգամ ավելի բարձր է 2020թ. նոյեմբերի տոկոսադրույքից: Տոկոսադրույքի բարձրացումը շարունակվեց նաև 2022թ.՝ մարտին հասնելով 9.25%-ի:

Գծապատկեր 6. Գնաճը, ԴՎԲ տոկոսադրույքը (դեպո) և պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) տոկոսադրույքը



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գծապատկեր 7. Վարկերի և ավանդների ծավալների փոփոխությունը և տոկոսադրույքները, %



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, ներկայացված է դրամային վարկերի միջին տոկոսադրույքը (մինչև 1 տարի ժամկետով) և դրամային ավանդների միջին տոկոսադրույքը (մինչև 1 տարի ժամկետով՝ բացառությամբ ցպահանջի)


¹¹ ԿԲ արձագանքի բացակայության պայմաններում գների աճը կարող է շատ ավելի բարձր լինել՝ հանգեցնելով տնտեսական իրավիճակի էլ ավելի վատթարացմանը: Հետևաբար, նշվածը չի նշանակում, որ ԿԲ-ն չպետք է արձագանքի, այլ միայն արձանագրվում է, որ գնաճի դեմ պայքարը իր հերթին նույնպես «ծախսատար» է մակրոտնտեսական ցուցանիշների առումով:

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքի բարձրացումը անմիջապես իր ազդեցությունն է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի (ՊԿՊ) տոկոսադրույքի վրա, որը սկսել է արձագանքել հենց 2020թ. դեկտեմբերից՝ բարձրանալով 0.2 տոկոսային կետով, իսկ 2021թ. հունվարին աճել է 0.8 տոկոսային կետով: 2022 մարտին ՊԿՊ-ների տոկոսադրույքը 2019թ. վերջի համեմատ աճել է 4.4 տոկոսային կետով՝ ԿԲ տոկոսադրույքի 3.75 տոկոսային կետով աճի պայմաններում (Գծապատկեր 6):

Հատկանշական է, որ ԿԲ տոկոսադրույքի փոփոխությունը ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքների վրա, հատկապես՝ վարկերի և ավանդների, նույնչափ ազդեցություն չի ունեցել: Այսպես, 2022թ. մարտին դրամային վարկերի միջին տոկոսադրույքը (մինչև 1 տարի ժամկետով) կազմել է շուրջ 12.5%՝ 2019թ. դեկտեմբերի համեմատ աճելով շուրջ 1.0 տոկոսային կետով: Կարճաժամկետ ավանդների տոկոսադրույքը նույն ժամանակահատվածում աճել է շուրջ 0.8 տոկոսային կետով (Գծապատկեր 7): Սակայն, նույն ժամանակահատվածում վարկերի ծավալները նվազել են (հիմնականում իրավաբանական անձանց վարկերի նվազման հաշվին), ինչը պայմանավորված է եղել ոչ միայն տոկոսադրույքի բարձրացմամբ, այլ նաև այնպիսի գործոններով, ինչպիսիք են տնտեսությունում անորոշության բարձր մակարդակը, չաշխատող վարկերի կտրուկ աճը և այլն:

2020-2021թթ. Արցախյան պատերազմը, դրա հետևանքները և կորոնավիրուսի համավարակը արդեն իսկ էականորեն մեծացրել էին ՀՀ տնտեսության հետագա զարգացման վերաբերյալ անորոշությունը, իսկ յուրաքանչյուր ամիս արագացող գնաճն ավելի է սրել այն: Այդ պայմաններում, տնտեսավարողները խուսափում են խոշորածավալ ներդրումներ իրականացնել՝ հետաձգելով իրենց պլանները, իսկ սպառողները մի կողմից՝ մեծացնում են պահանջարկը առաջնային սպառման ապրանքների նկատմամբ (հանգեցնելով գնաճի ավելի արագացմանը), մյուս կողմից՝ մեծացնում են խնայողությունները՝ ինչի հաշվին տնօրինվող եկամտի համեմատ սպառման ծավալները նվազում են:

Գծապատկեր 8. Խնայողությունների և սպառման կշիռները տնօրինվող եկամտում 2019-2021 թվականներին, %




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Արդյունքում, 2021թ. խնայողությունների կշիռը տնօրինվող եկամտում հասել է 15.6%-ի՝ 2019թ. 9.3%-ի համեմատ (Գծապատկեր 8): Խնայողությունների աճը պետք է հանգեցնի ներդրումների աճին, սակայն գնաճի և այլ գործոնների ազդեցությամբ տնտեսությունում անորոշությունների աճի հետևանքով դա տեղի չի ունենում: 2021թ. ներդրումները (հիմնական միջոցների համախառն կուտակումը) աճել են 7.7%-ով, 2020թ. 8.6% անկումից հետո: Ստացվում է, որ ներդրումների իրական ծավալը չի վերականգնվել


2021 թվականին՝ խնայողությունների բարձր աճի պարագայում: Վերջինս վկայում է անորոշությունների և տնտեսությունում ներդրումային միջավայրի ցածր գրավչության մասին: Ներդրումային ակտիվության ցածր մակարդակի մասին է խոսում նաև իրավաբանական անձանց վարկերի շուրջ 10.9%-ով նվազումը:

Գնաճը բնականաբար զգալի ազդեցություն է ունենում նաև հարկաբյուջետային ցուցանիշների վրա, սակայն 2021թ. բացասական ազդեցությունները հակակշռվել են դրական ազդեցություններով: Այսպես, գնաճի արդյունքում հավաքագրվել է շուրջ 110.8 մլրդ դրամով (ՀՆԱ-ի 1.6%-ի չափով) ավելի հարկային եկամուտներ, իսկ գնաճի հետևանքով ավելի կատարված ծախսերի ծավալը կազմել է շուրջ 135.4 մլրդ դրամ (ՀՆԱ-ի 1.9%-ի չափ): Արդյունքում պետական բյուջեի պակասուրդն աճել է 24.6 մլրդ դրամով (ՀՆԱ-ի 0.3%-ի չափով), որը, բնականաբար, այդ չափով ավելացրել է բյուջեի ֆինանսավորման համար կառավարության կողմից ներգրավվող փոխառությունների ծավալը (Գծապատկեր 9): Միաժամանակ, ՀՆԱ-ի դեֆլյատորի աճի (համախառն ներքին արտադրանքի գների աճի) արագացման արդյունքում արձանագրվել է անվանական ՀՆԱ-ի աճ, ինչը դրական է ազդել կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության վրա: Այս գործոնների արդյունքում պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը եղել է շուրջ 4.2 տոկոսային կետով ավելի ցածր, քան կլինեք գնաճի բացակայության պայմաններում (Գծապատկեր 10): Այսինքն՝ գնաճի բացակայության պայմաններում պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազում տեղի չէր ունենա:

Գծապատկեր 9. Գնաճի հետևանքով պետական բյուջեի ցուցանիշների աճը, մլրդ դրամ



Գծապատկեր 10. Գնաճի ազդեցությունը ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության վրա, %



Աղբյուր՝ ՀՀ ՖՆ, հեղինակի հաշվարկներ

Գնաճի պայմաններում բնակչության իրական եկամուտների աճը եղել է գրեթե զրոյական: 2021թ. ընթացքում գների միջին աճը կազմել է 7.2%, իսկ միջին անվանական աշխատավարձն աճել է 7.6%-ով: Արդյունքում աշխատավարձերի աճը գրեթե ամբողջությամբ չեզոքացել է գների աճի հաշվին, ինչի արդյունքում իրական աշխատավարձի միջին աճը կազմել է ընդամենը 0.4%: Նույն տրամաբանությամբ գնաճի պայմաններում աննշան են դարձել նաև կենսաթոշակների և նպաստների աճերը:


Ամփոփելով կարող ենք նշել, որ 2020-2021թթ. գնաճը ՀՀ մակրոտնտեսական զարգացումների վրա ունեցել է զգալի բացասական ազդեցություններ: Գնաճի արագացման պայմաններում աճել են անորոշությունները, իսկ ներդրումների աճը բավարար չի եղել դրանց իրական ծավալի և իրական ՀՆԱ-ի վերականգնման համար: Գնաճի տեմպի արագացման պայմաններում աշխատողների իրական աշխատավարձի աճը 2021թ. գրեթե զրոյական է եղել, ինչի արդյունքում բնակչության կենսամակարդակի էական բարելավում տեղի չի ունեցել: Փոխարենը, գնաճը օգնել է հարկային եկամուտների հավաքագրմանը, ինչը կառավարության ծրագրի 2021թ. կատարողականի զեկույցում ներկայացվել է որպես հարկերի գերակատարում վարչարարության հաշվին, մյուս կողմից՝ օգնել է ապահովել պարտք/ՀՆԱ հարաբերակցության նվազումը:

3. ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԳՆԵՐԻ ԱՃԻ ՆՊԱՍՏՈՒՄՆԵՐՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱԺԻՆ


2021թ. դեկտեմբերին գների մակարդակը միջին հաշվով 7.7%-ով ավելի բարձր է եղել, քան նախորդ տարվա նույն ամսին: Սակայն, սպառողական զամբյուղում գների աճի տեմպերը էականորեն տարբերվել է ըստ ապրանքատեսակների:

Գնաճը հիմնականում պայմանավորված է եղել «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի գների շուրջ 12.9% աճով, որն ապահովել է 7.7% գնաճի 4.8 տոկոսային կետը: Գնաճին զգալի՝ շուրջ 1.8 տոկոսային կետով նպաստել է «ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի 8.0% գնաճը, իսկ ծառայությունների և «ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ» ապրանքախմբի գներն աճել են համապատասխանաբար 1.9% և 9.2%՝ 12-ամսյա գնաճին նպաստելով շուրջ 0.7 և 0.4 տոկոսային կետով:

Գծապատկեր 11. Ապրանքախմբերի նպաստումները 12-ամսյա գնաճին



Գծապատկեր 12. Ապրանքախմբերի նպաստումները միջին գնաճին



■ Ծառայություններ
■ Ոչ պարենային ապրանքներ
■ Ալկոհոլային խմիչքներ, ծխախոտային արտադրատեսակներ
■ Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ
—●— Ընդամենը

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, հեղինակի հաշվարկներ

Գների աճին ամենամեծ նպաստում ունեցող «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի մեջ ներառված ապրանքների գները հիմնականում աճել են շատ ավելի բարձր տեմպով, քան ընդհանուր գնաճը: Մասնավորապես, էականորեն՝ շուրջ 40%-ով աճել է բանջարեղենի գները՝ ընդհանուր գնաճին նպաստելով 1.9 տոկոսային կետով, որի կազմում կարտոֆիլի գներն աճել են շուրջ 76.1%-ով: Ավելի քան 10%-ով աճել են նաև հացաբուլկեղենի,

կաթնամթերքի և սննդային յուղերի գները, իսկ ձկան և ծովամթերքի գներն աճել են շուրջ 31.4%-ով: Վերջիններս հանդիսանում են առաջնային օգտագործման ապրանքներ և դրանց գների աճն անմիջականորեն ազդում է բնակչության կենսամակարդակի վրա:

Աղյուսակ 1. «Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբում ներառված ապրանքների գների աճերը և նպաստումներն ընդհանուր գնաճին

Ապրանքատեսակ	2021թ. Գնաճ (12-ամսյա), %	Նպաստումն ընդհանուր գնաճին, տ.կ.
Սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ	12.9	4.8
Սննդամթերք, այդ թվում՝	13.2	4.7
Հացաբուլկեղեն և ծավարեղեն	10.2	0.8
Միս	7.5	0.7
Ձուկ և ծովամթերք	31.4	0.1
Կաթնամթերք, պանիր և ձու	11.2	0.6
Յուղեր և ճարպեր (այդ թվում՝ կարագ)	14.7	0.3
Մրգեր	1.8	0.1
Բանջարեղեն, այդ թվում՝	40.0	1.9
Կարտոֆիլ	76.1	0.7
Շաքար, մրգախյուս, մեղր, օշարակներ, շոկոլադե և շաքարային հրուշակեղեն	12.6	0.2
Սննդամթերք, չներառված ուրիշ խմբավորումներում	3.1	0.0
Ոչ ալկոհոլային խմիչքներ, այդ թվում՝	7.0	0.1
Սուրճ, թեյ և կակաո	7.8	0.1
Հանքային կամ աղբյուրի ջուր. շալցված խմելու ջուր	5.1	0.0


Ոչ պարենային ապրանքների գների աճը հիմնականում պայմանավորված է եղել վառելանյութերի (այդ թվում՝ բենզինի) և բժշկական ու դեղագործական ապրանքների գների աճով, իսկ ծառայությունների գծով արձանագրված գնաճի վրա իր անմիջական ազդեցությունն է թողել օդային տրանսպորտի միջազգային չվերթեր իրականացնող ծառայությունների, ամբուլատոր և բժշկական ծառայությունների սակագների աճը:

4. ԳՆԱԾԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ՝ ԸՍՏ ՏԱՐԲԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ

Ընդհանուր գնաճի ցուցանիշներն ուսումնասիրելը բավական կարևոր է, սակայն սպառողական զամբյուղում ներառված բոլոր ապրանքների միջին գների աճը ամբողջական պատկերացում չի տալիս բնակչության տարբեր սոցիալական խմբերի վրա գնաճի ազդեցությունների վերաբերյալ: Այդ իսկ պատճառով, այս բաժնում ուսումնասիրվել են բնակչության եկամուտների և ծախսերի կառուցվածքը, ինչը թույլ է տվել բացահայտել բնակչության տարբեր սոցիալական խմբերի համար մի կողմից՝ գնաճի ազդեցությունները եկամուտների աճի տեմպի վրա, մյուս կողմից՝ ծախսերի աճը գնաճի արագացման պայմաններում:

Տնային տնտեսությունների դրամական եկամուտների գրեթե կեսը կազմում է աշխատավարձը, որի կշիռն ընդհանուր եկամուտներում 2020թ. կազմել է 50%՝ 2019թ. համեմատ աճելով 2.0 տոկոսային կետով¹²:

Գծապատկեր 13. Տնային տնտեսությունների դրամական եկամուտների կառուցվածքը 2019-2020թթ.



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Բնակչության 2020թ. եկամուտների կառուցվածքում էական դեր են ունեցել պետական թոշակները և նպաստները, ինչպես նաև ինքնազբաղվածությունից ստացվող եկամուտը, որոնց կշիռները կազմել են համապատասխանաբար 17% և 15%: Տրանսֆերտների կշիռը նվազել է՝ կազմելով 7%, ինչը պայմանավորված է համավարակի պայմաններում արտագնա աշխատանքի մեկնողների թվաքանակի կրճատմամբ (Գծապատկեր 13):

¹² Տնային տնտեսությունների ծախսերի և եկամուտների կառուցվածքի վերաբերյալ 2021թ. տեղեկատվությունը սույն վերլուծության իրականացման պահին դեռևս չի հրապարակվել:

Աղյուսակ 2. Տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքը՝ ըստ դեցիլային խմբերի 2020 թվականին

2020թ.	Դեցիլային խմբեր՝ ըստ դրամական եկամուտների									
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X
Դրամական եկամուտները, հազ. դրամ	13.5	27.2	37.4	46.0	54.9	65.1	76.4	91.2	111.9	198.0
Այդ թվում՝ (% ընդհանուր եկամուտների մեջ)										
եկամուտներ աշխատանքից	29%	54%	57%	59%	63%	67%	69%	65%	71%	66%
թոշակներ, նպաստներ, կրթաթոշակներ	44%	29%	26%	29%	25%	19%	16%	19%	12%	10%
եկամուտներ գյուղմթերքի վաճառքից	20%	12%	11%	7%	6%	8%	8%	9%	8%	11%
տրանսֆերտներ	6%	4%	5%	4%	5%	5%	6%	6%	7%	10%
այլ եկամուտներ	1%	1%	1%	1%	1%	1%	1%	1%	2%	3%

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, հեղինակի հաշվարկներ

Բնակչության եկամուտների կառուցվածքը տարբերվում է ըստ սոցիալական խմբերի: Այսպես, ինչպես և կարելի է ենթադրել, թոշակների և նպաստների կշիռն ընդհանուր եկամուտներում հատկապես բարձր է առաջին դեցիլային խմբում. ամենացածր եկամուտ ունեցող դեցիլում (բնակչության 10%-ը) ներառված բնակչության եկամտի շուրջ 44%-ը կազմում են թոշակները և նպաստները, իսկ ամենահարուստ դեցիլում այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 10%-ը: Ամենաբարձր երկու դեցիլներում գտնվող բնակչության եկամտի գերակշիռ մասը՝ միջին հաշվով շուրջ 69%-ը, կազմում է աշխատավարձը: Ինչ վերաբերում է տրանսֆերտներին, ապա դրանց կշիռը բարձր է ամենացածր և ամենաբարձր եկամուտ ունեցող դեցիլներում, մինչդեռ միջին եկամուտ ունեցողների եկամտային կառուցվածքում տրանսֆերտների կշիռը համեմատաբար ցածր է (Աղյուսակ 2):

Եկամուտների կառուցվածքի ուսումնասիրությունը անհրաժեշտ է վերջին տարիներին դրանց վրա գնաճի ազդեցությունները գնահատելու համար: Նշանակված ամսական կենսաթոշակի միջին չափը 2020թ. կազմել է 43,983.0 դրամ՝ 2019թ. համեմատ աճելով 8.8%-ով: Սակայն, 2021թ. կենսաթոշակների միջին չափը կազմել է 43,677.0 դրամ՝ 2020թ. համեմատ նվազելով 0.7%-ով: Իրական արտահայտությամբ, այսինքն՝ գնաճով ճշգրտելու պարագայում, միջին կենսաթոշակը 2021թ. նվազել է շուրջ 7.4%-ով: Աշխատավարձերի մասով, պատկերը նույնպես հուսադրող չէ, քանի որ իրական արտահայտությամբ աշխատավարձերի աճը 2021թ. կազմել է ընդամենը 0.4%: Զգալի աճ է արձանագրվել միայն արտասահմանից ստացվող տրանսֆերտների գծով, որոնց դրամային ծավալը 2021թ. աճել է շուրջ 37.8%-ով, իսկ իրական ծավալը՝ 28.6%-ով (Աղյուսակ 3):

Հաշվի առնելով վերոհիշյալ երեք բաղադրիչների՝ թոշակների, աշխատավարձի և տրանսֆերտների կշիռների տարբերությունները տարբեր սոցիալական խմբերում գտնվող բնակչության եկամուտներում, դրանց փոփոխությունները նույնպես տարբեր չափով են փոխել բարձր և ցածր դեցիլային խմբերում գտնվողների եկամուտները: Այսպես, ամենացածր դեցիլում գտնվողների անվանական եկամուտները վերոհիշյալ բաղադրիչների ազդեցությամբ աճել են 4.2%-ով, մինչդեռ ամենաբարձր դեցիլային խմբի համար աճը կազմել է 8.6%: Իրական արտահայտությամբ պատկերն ավելի խնդրահարույց է, քանի որ ամենացածր դեցիլում գտնվող բնակչության եկամուտները նվազել են շուրջ 1.4%-ով, իսկ ամենաբարձր խմբում՝ աճել են շուրջ 2.3%-ով: Ստացվում է, որ 2021թ. սոցիալապես խոցելի խավի կենսամակարդակը նվազել է, իսկ բարձր եկամուտներ ունեցողներինը՝ աճել, ինչի արդյունքում մեծացել է եկամուտների անհավասարությունը:

Աղյուսակ 3. Բնակչության եկամտի հիմնական բաղադրիչների անվանական և իրական աճերը 2019-2021թթ.

	2019	2020	2021
Անվանական աճեր, %			
Միջին աշխատավարձ	5.8	3.9	7.6
Միջին կենսաթոշակ	-0.1	8.8	-0.7
Տրանսֆերտներ*	-3.3	-8.6	37.8
Իրական աճեր, %			
Միջին աշխատավարձ	4.3	2.6	0.4
Միջին կենսաթոշակ	-1.5	7.5	-7.4
Տրանսֆերտներ	-4.7	-9.7	28.6

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ և ՀՀ ԿԲ

* Ներկայացված է դրամային աճը

Եկամուտների աճի նման ցածր մակարդակի պայմաններում, տնային տնտեսությունները ստիպված են եղել վճարել զգալիորեն ավելի մեծ գումարներ պարենային ապրանքների ձեռքբերման համար: 2021թ. ըստ իրականացված գնահատականների, պարենային ապրանքների զամբյուղի արժեքը միջին հաշվով աճել է շուրջ 11.7%-ով (Աղյուսակ 4), այն դեպքում, երբ բնակչության սոցիալապես անապահով խավի եկամուտներն աճել են ընդամենը 4.2%-ով: Ընդ որում, 11.7% աճը հիմնականում պայմանավորված է այնպիսի ապրանքների գների աճով, ինչպիսիք են հացը և հացամթերքը, մրգերը և բանջարեղենը, սննդային յուղերը և միսը, որոնք հանդիսանում են առաջին անհրաժեշտության ապրանքներ: Այսինքն՝ այդ ապրանքների գների աճը, եկամուտների ոչ համարժեք աճի պայմաններում, բնակչության ծախսերի կառուցվածքից դուրս է մղելու այլ ծախսերը՝ այդպիսով նվազեցնելով նրանց բարեկեցությունը:

Աղյուսակ 4. Պարենային ապրանքների սպառման ծախսերը բնակչության մեկ շնչի հաշվով, միջին ամսական


	2020	2021*	2021թ. աճը, %
Պարենային ապրանքներ	20,404.0	22,787.6	11.7
Սննդամթերք	18,057.5	20,253.5	12.2
հաց և հացամթերք	3,938.0	4,339.6	10.2
միս, թռչուն և ձուկ	4,774.5	5,132.6	7.5
կաթնամթերք և ձու	2,509.7	2,642.7	5.3
կարագ և յուղ	1,244.6	1,427.6	14.7
մրգեր և բանջարեղեն	3,958.4	4,785.7	20.9
շաքար, թեյ, սուրճ, քաղցրեղեն	1,346.7	1,613.3	19.8
ոչ ալկոհոլային խմիչքներ	183.6	196.5	7.0
այլ սննդամթերք	102.0	115.5	13.2
Ալկոհոլային խմիչքներ	142.8	155.5	8.9
Սնունդ և խմիչք տանից դուրս	469.3	472.5	0.7
Ծխախոտեղեն	1,734.3	1,906.0	9.9

Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

* 2021թ. տվյալները ՀՀ ՎԿ կողմից դեռևս չեն հրապարակվել: Աղյուսակում ներառված են հեղինակի կողմից գնահատումները՝ հիմնված 2021թ. համապատասխան ապրանքների միջին գների փոփոխությունների վրա: Ընդ որում, գնահատումն իրականացվել է ըստ ապրանքատեսակների՝ ՀՀ ՎԿ կողմից հրապարակող դասակարգման, հետևաբար, ագրեգացված բաղադրիչների գծով ծախսերի աճը (օրինակ՝ սննդամթերքի գծով ծախսերի աճը) կարող է որոշակիորեն տարբերվել այդ ապրանքատեսակի գնաճի ցուցանիշից:


Վերոհիշյալ վերլուծությունը ցույց է տալիս սպառողական գների միջին աճի ազդեցությունը բնակչության եկամուտների փոփոխության վրա: Սակայն, ինչպես ներկայացվեց նախորդ բաժնում, մի շարք առաջնային օգտագործման ապրանքների գները աճել են շատ ավելի բարձր տեմպով, քան միջին գնաճը: Ընդ որում, այդ ապրանքատեսակները ավելի մեծ կշիռ ունեն հենց ցածր եկամուտ ունեցող բնակչության սպառողական ծախսերում:

Գծապատկեր 14. Սպառողական ծախսերի կառուցվածքը՝ ըստ դեցիլային խմբերի 2020-ին¹³



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

Գծապատկեր 15. Սպառողական ապրանքների գների աճը՝ ըստ դեցիլների 2021-ին



Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, հեղինակի գնահատականներ

Մասնավորապես, ծախսերի ամենացածր դեցիլային խմբում գտնվող բնակչության սպառողական ծախսերի շուրջ 52%-ը ուղղվում են սննդամթերքի ձեռքբերմանը, մինչդեռ ամենաբարձր դեցիլում, այդ կշիռը կազմում է 33%: Բնակչության սպառողական ծախսերի տարբերություններն ըստ դեցիլային խմբերի ներկայացված է Գծապատկեր 14-ում: Հաշվի առնելով տարբեր ապրանքատեսակների գների աճերի տարբերությունները, մեր կողմից հաշվարկվել է նաև բնակչության տարբեր դեցիլային խմբերի համար սպառողական գների աճերը, որոնք ներկայացված են Գծապատկեր 15-ում: Ըստ այդ գնահատականների՝ ամենացածր խմբում գտնվող տնային տնտեսությունների համար գնաճը 2021թ. կազմել է շուրջ 8.5%, այն դեպքում, երբ ամենաբարձր դեցիլում գտնվողների համար գնաճը եղել է 6.1%: Ինչպես արդեն նշվել է, գնաճի տարբերությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ ցածր եկամուտ ունեցողների ծախսերի կառուցվածքում մեծ են հենց այն ապրանքների կշիռները, որոնց գծով արձանագրվել է գների առավել բարձր աճ: Արդյունքում ստացվում է, որ գնաճը առավել մեծ չափով ազդել է ցածր եկամուտ ունեցող բնակչության վրա՝ էականորեն նվազեցնելով նրանց կենսամակարդակը և մեծացնելով սոցիալական անհավասարությունը:

¹³ Սպառողական ծախսերի կառուցվածքը ներկայացված է ըստ սպառողական ծախսերի դեցիլային խմբերի՝ մեկ շնչի հաշվով միջին ամսական:

5. ՌՈՒՍ-ՌԻԿՐԱԻՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԳՆԱԾԻ ՀԵՏԱԳԱ ԱՐԱԳԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

Ինչպես նշվեց նախորդ բաժիններում, 2021թ. գնաճը, լինելով 2020-2021թթ. ինչպես ՀՀ, այնպես էլ համաշխարհային տնտեսությունում տեղի ունեցող բացասական երևույթների հետևանք, էականորեն վատթարացրել է բնակչության սոցիալական վիճակը և մեծացրել է անհավասարությունը: 2022թ., սակայն, արտաքին շուկերի տեսանկյունից իրավիճակը կարող է ավելի վատթարանալ, քանի որ փետրվարին սկսված ռուս-ուկրաինական հակամարտությունը արդեն իսկ բացասական տնտեսական հետևանքներ է ունենում: Վերջիններս դրսևորվում են ինչպես համաշխարհային տնտեսությունում, այնպես էլ ՌԴ-ի հետ էական փոխկապվածություն ունեցող երկրներում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում:

ՌԴ-ում տնտեսական իրավիճակի վատթարացումը տարբեր փոխանցման ուղիներով կտարածվի նաև Հայաստանի վրա: Այդ փոխանցման ուղիներն են, մասնավորապես, արտաքին առևտուրը (դեպի ՌԴ ապրանքների արտահանումը 2021թ. կազմել է ընդհանուր ՀՀ արտահանման 28%-ը, իսկ ՌԴ-ից ներմուծումը՝ ՀՀ ներմուծման 33%-ը), դրամական փոխանցումները (2021թ. կազմել են դեպի ՀՀ ընդհանուր դրամական փոխանցումների զուտ ներհոսքի շուրջ 53%-ը), օտարերկրյա ներդրումները (2021թ. ՀՀ-ում կատարվող օտարերկրյա ներդրումների շուրջ 40%-ը) և տուրիզմը (2021թ. զբոսաշրջիկների շուրջ 40%-ը եկել են ՌԴ-ից): Այս փոխանցման ուղիներից բացի, Հայաստանի տնտեսության վրա կարող են լինել նաև անուղղակի ազդեցություններ: Մասնավորապես, ինչպես նախորդ բաժիններում նշել ենք, ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում կտրուկ արագացել են պարենային ապրանքների և էներգակիրների միջազգային գների աճերը, ինչն էական ազդեցություն է ունենում համաշխարհային գնաճի վրա, հետևաբար այն կարող է հանգեցնել ՀՀ ներմուծվող ապրանքների գների աճին: Այս կապերի և զարգացումների արդյունքում, ՀՀ-ում գնաճի արագացման գործոնները կլինեն հիմնականում ներմուծվող ապրանքների գների աճը, ՀՀ դրամի արժեզրկումը, ինչպես նաև ներքին շուկայում բնակարանավարձերի և ծառայությունների գների աճերը:

Միջազգային շուկաներում, ներառյալ՝ ՀՀ առևտրային գործընկեր երկրներում, գնաճի արագացումը կհանգեցնի ՀՀ ներմուծվող ապրանքների գների աճին, հետևաբար նաև ընդհանուր գնաճի արագացմանը: Այս առումով, իրավիճակը փոքր-ինչ կմեղմվի այն հանգամանքի հաշվին, որ գազի ներմուծման գինը ֆիքսված է, և շուկայական գործոնները դրա վրա չեն ազդում: Սակայն, այնուամենայնիվ, գազի գնի բարձրացում տարվա ընթացքում նույնպես սպասվում է:

ՀՀ դրամի արժեզրկում արդեն իսկ դիտվել է մարտ ամսին՝ ՌԴ ռուբլու կտրուկ արժեզրկումից հետո: Սակայն, մարտի վերջին ՀՀ դրամը կայունացել է՝ վերադառնալով մինչպատերազմյան մակարդակին՝ մի կողմից՝ ՀՀ ԿԲ տոկոսադրույքի կտրուկ բարձրացման, մյուս կողմից՝ ՌԴ ռուբլու արժևորման գործոններով պայմանավորված: Ավելին, ապրիլից սկսած դրամը սկսել է արժևորվել՝ լինելով ավելի արժևորված, քան հակամարտությունից առաջ էր: Սակայն ՀՀ դրամի արժևորման հիմքում ընկած են ոչ թե հիմնարար գործոններ (ՀՀ տնտեսության պոտենցիալի աճ կամ առևտրային հաշվեկշռի բարելավում), այլ ժամանակավոր գործոններ (դեպի Հայաստան արտարժույթի ժամանակավոր ներհոսք, այդ թվում՝ Հայաստան ժամանած օտարերկրյա քաղաքացիների կողմից բերված գումարների հաշվին): Այդ գործոնները կայուն չեն, հետևաբար դրամի արժեզրկման ռիսկը դեռևս առկա է, և ՌԴ ռուբլու դիրքերի հետագա թուլացման պարագայում, ինչպես նաև ՀՀ տնտեսական միջավայրի վատթարացման դեպքում, ՀՀ դրամը կարող է արժեզրկվել՝ հանգեցնելով գնաճի արագացմանը:

ՌԴ նկատմամբ կիրառված պատժամիջոցների պայմաններում, բազմաթիվ ՌԴ քաղաքացիներ, ինչպես նաև մի շարք գործարարներ տեղափոխվել են Հայաստան: Ըստ մամուլում շրջանառվող տեղեկությունների (պաշտոնական տեղեկատվություն առկա չէ) փետրվարի վերջից մինչև մարտի վերջը Հայաստան է ժամանել շուրջ 50000 ՌԴ քաղաքացի: Այդ հոսքերն էական ճնշում են առաջացրել ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա՝ հանգեցնելով վարձավճարների կտրուկ թանկացմանը: Բացի այդ, ՌԴ քաղաքացիները զգալիորեն մեծացրել են ՀՀ-ում ծառայությունների նկատմամբ պահանջարկը, ինչը նույնպես գնաճն արագացնող գործոն է հանդիսանում:

Վերոհիշյալ գործոնների քանակական գնահատումը բավական բարդ է, քանի որ դրանց հետագա միտումները և հնարավոր ծավալները անորոշ են: Մասնավորապես՝ անորոշ է, թե որքան կտևի ռուս-ուկրաինական հակամարտությունը և դեռ որքան կբարձրանան էներգակիրների և պարենային ապրանքների գները: Բացի այդ, անորոշ է, թե որքան կկազմեն ՌԴ-ից ՀՀ ժամանող քաղաքացիները և գործարարները: Սակայն, արդեն իսկ տեղի ունեցած իրադարձությունների վրա հիմնվելով կարելի է նշել, որ գնաճի արագացումն անխուսափելի կլինի: 2022թ. մարտին գնաճի արագացումը (որը կազմել է 7.4% փետրվարի 6.5%-ի դիմաց), ԿԲ տոկոսադրույքի կտրուկ բարձրացման պայմաններում, արդեն իսկ դրա մասին է խոսում:

Ինչպես 2020-2021 թվականներին, 2022 թվականին գնաճի արագացումը նույնպես բացասական ազդեցություն կունենա բնակչության սոցիալական անհավասարության վրա: Մասնավորապես, սննդամթերքի գների աճը կհանգեցնի ցածր եկամուտ ունեցող բնակչության կենսամակարդակի ավելի նվազմանը, քանի

որ նրանց սպառողական ծախսերում սննդամթերքի կշիռն ավելի մեծ է: Մյուս կողմից, անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի էական աճը կհանգեցնի գույքի սեփականատերերի (ովքեր հիմնականում բարձր սոցիալական խմբում գտնվող բնակչությունն են ներկայացնում) եկամուտների աճին: Մինչդեռ վարձու աշխատողների և սոցիալապես անապահով խավի համար եկամտի էական փոփոխություն չի լինի, և գնաճը կնվազեցնի նրանց իրական եկամուտները, հետևաբար նաև կենսամակարդակը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Գնաճի արագացումը վերջին երկու տարիներին հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային շուկաներում մատակարարման շղթաների խափանմամբ, էներգակիրների գների աճով, զարգացած երկրներում (հիմնականում ԱՄՆ-ում և ԵՄ-ում) դրամավարկային քաղաքականությունների խթանման մեծ ծավալներով: ՀՀ-ում գնաճի արագացումը պայմանավորված է եղել առաջարկի գործոններով, այդ թվում՝ ներմուծվող ապրանքների գների աճով, ինչպես նաև 2021թ. առաջին կեսին փոխարժեքի արժեզրկման ազդեցություններով: 2021թ. կեսից սկսել է նշանակալի լինել նաև պահանջարկի գործոնների ազդեցությունը գնաճի վրա, ինչն էլ կապված էր արտաքին պահանջարկի արագացման և արտերկրից դեպի Հայաստան դրամական փոխանցումների պահպանվող բարձր ցուցանիշով:

Վերլուծությունը ցույց է տվել, որ գնաճի տեմպի կտրուկ արագացումը 2020-2021 թվականներին հանգեցրել է էական սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների: Մասնավորապես, գնաճի պայմաններում 2022 մարտին 2019թ. վերջի համեմատ էականորեն՝ շուրջ 4.4 տոկոսային կետով աճել են պետական կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքները, սակայն ֆինանսական շուկայի այլ տոկոսադրույքների (օրինակ՝ վարկերի) վրա ազդեցությունը նույնքան մեծ չի եղել: Այնուամենայնիվ, վարկերի ծավալները կրճատվել են (հիմնականում իրավաբանական անձանց վարկերի նվազման հաշվին)՝ արտացոլելով տնտեսությունում ցածր ներդրումային ակտիվությունը: Գնաճի պայմաններում, միջին ամսական աշխատավարձերի իրական աճը եղել է գրեթե զրոյական (ընդամենը 0.4%): Գնաճն ազդել է թոշակառուների և նպաստ ստացողների վրա՝ նվազեցնելով թոշակների և նպաստների աճի տեմպը:

Գնաճը հիմնականում պայմանավորված է եղել «սննդամթերք և ոչ ալկոհոլային խմիչքներ» ապրանքախմբի գների շուրջ 12.9% աճով, որն ապահովել է 7.7% գնաճի 4.8 տոկոսային կետը: Այդ ապրանքախմբի կառուցվածքում գնաճը հիմնականում պայմանավորվել է բանջարեղենի (գների աճը՝ շուրջ 40.0%), հացաբուլկեղենի, կաթնամթերքի և սննդային յուղերի գների (վերջիններիս գներն աճել են ավելի քան 10%-ով) էական աճերով:

Գնաճի պայմաններում էականորեն աճել է սոցիալական անհավասարությունը: Մասնավորապես, սոցիալապես անապահով բնակչության եկամուտների կառուցվածքում մեծ կշիռ ունեն թոշակները, որոնց միջին ցուցանիշը նվազել է 2021թ.՝ հանգեցնելով ընդհանուր եկամուտների աճի դանդաղման: Միևնույն ժամանակ, ամենաբարձր դեցիլում գտնվողների եկամուտները աճել են, քանի որ նրանց եկամուտների կառուցվածքում մեծ են աշխատավարձերի և

տրանսֆերտների կշիռները, որոնք 2021թ. ընթացքում աճ են գրանցել (չնայած այն հանգամանքին, որ աշխատավարձերի իրական աճը եղել է աննշան): Բացի այդ, ցածր դեցիլներում գտնվող բնակչության սպառողական ծախսերում սննդամթերքի մասնաբաժինը էականորեն ավելի շատ է: Եվ հենց սննդամթերքի գծով է արձանագրվել գների բարձր աճ:

Այս պայմաններում ցածր եկամուտ ունեցողների համար գների աճը կազմել է 8.5%, իսկ ամենաբարձր եկամուտ ունեցողների համար՝ 6.1%: Ստացվում է, որ մի կողմից՝ սոցիալապես խոցելի խավի եկամուտներն ավելի քիչ չափով են աճել, մյուս կողմից՝ նրանց համար սպառվող ապրանքների գներն ավելի մեծ չափով են աճել՝ համեմատած բնակչության հարուստ խմբի հետ: Հետևաբար, հարուստների և աղքատների միջև կենսամակարդակների տարբերությունը մեծացել է:

Վերևում նկարագրված են միայն 2020-2021թթ. գնաճի ազդեցությունները: Սակայն, 2022թ. փետրվարից սկսած ռուս-ուկրաինական հակամարտության արդյունքում կտրուկ աճել են էներգակիրների և պարենի համաշխարհային գները, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեն ՀՀ գնաճի արագացմանը (արդեն իսկ նկատելի է մարտ ամսին՝ փետրվարի համեմատ գնաճի արագացումը): Գնաճի արագացման դեպքում, վերը նկարագրված ազդեցությունները նույնպես ակնհայտ կլինեն՝ հանգեցնելով իրավիճակի բարդացմանը:

Հետևաբար, վերոհիշյալ ազդեցությունների մեղմման, ինչպես նաև հետագայում դրանց չեզոքացման համար անհրաժեշտ է ոչ միայն ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառումը, այլ նաև կառավարության համապատասխան քաղաքականության իրականացումը: Մասնավորապես, վերջինս հիմնականում պետք է ուղղված լինի սոցիալական խնդիրների մեղմմանը՝ ներառյալ անհավասարության էական աճի զսպմանը, ինչը հնարավոր կլինի ապահովել եկամուտների առավել արդյունավետ վերաբաշխման համակարգերի առկայության դեպքում:

Օգտագործված գրականության ցանկ և աղբյուրներ

Հոդվածներ, աշխատանքային փաստաթղթեր, հաշվետվություններ

- Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 2-րդ եռամսյակ 2021թ., Դրամավարկային քաղաքականության 2021թ. 1-ին եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն), ՀՀ կենտրոնական բանկ, 28.06.2021
- Գնաճի հաշվետվություն (Դրամավարկային քաղաքականության ծրագիր, 4-րդ եռամսյակ 2021թ., Դրամավարկային քաղաքականության 2021թ. 3-րդ եռամսյակի ծրագրի կատարման հաշվետվություն), ՀՀ կենտրոնական բանկ, 27.12.2021
- Akerlof, George A., William T. Dickens, and George L. Perry (1976). "The Macroeconomics of Low Inflation." Brookings Papers on Economic Activity 1: 1-76
- Ashraf Q., Gershman B., Howitt P. (2013). "How Inflation Affects Macroeconomic Performance: An Agent-Based Computational Investigation", June 2013
- Fortin, Pierre (1996). "The Great Canadian Slump." Canadian Journal of Economics 29, November 1996: 761-787
- Rocha L.A., Cardenas L.Q., Reis F.A., Silva N.G (2021). "Inflation and innovation value: How inflation affects innovation and the value strategy across firms", Estudios Económicos, vol. XXXVIII, no. 76, pp. 147-195
- IMF (2022). World Economic Outlook, January Update. Rising Caseloads, A Disrupted Recovery, and Higher Inflation
- IMF (2022). World Economic Outlook: War Sets Back the Global Recovery, April, 2022

Կայքեր

- ՀՀ կենտրոնական բանկ՝ <https://www.cba.am>
- ՀՀ վիճակագրական կոմիտե՝ <https://www.armstat.am>
- ՀՀ ֆինանսների նախարարություն՝ <https://www.minfin.am>
- International Monetary Fund - <https://www.imf.org>
- World bank – www.worldbank.org

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: